«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Հաստատություն՝ « Հրաշք Մանկիկ » ՍՊԸ

Դաստիարակ՝ Սահակյան Նարինե

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

Երևան 2023թ.

Բովանդակություն

Ներածություն էջ3
Մանկապարտեզի և ընտանիքի կապը, որպես ժամանակակից խնդիր ..... էջ 5
Մանկապարտեզում և ընտանիքում տարվող մանկավարժական աշխատանքների բովանդակությունը ..... էջ 6
Երկխոսություն ..... էջ 12
Մանկավարժ և ծնող երկխոսության մի քանի դժվարություններ ..... էջ 14
Ծնողների հետ հաղորդակցման փորձի ինքնավերլուծում էջ16
Ծնողների հետ համագործակցությանը ներկայացվող պահանջները ..... էջ 17
Խորհուրդներ ծնողներին ..... էջ 18
Եզրակացություն ..... էջ 19
Օգտագործված գրականության ցանկ ..... էջ 20

Ներածություն

Հետազոտական աշխատանքում առաջին պլան է մղված <<մանկապարտեզ-ընտանիք>> համագործակցությունը. Համագործակցելով ընտանիքների հետ հնարավոր է իրականացնել նաև ծնողների կրթություն՝ անդրադառնալով, ինչպես երեխաների խնամքի, առողջության, այնպես էլ ուսուցման և դաստիարակության խնդիրներին:

Խնդիրների հաջող իրականացման պայման է մանկապարտեզի և ընտանիքի (ընտանեկան մշակույթի առանձնահատկությունների հաշվառմամբ) փոխադարձ վստահելի կապն ու համագործակցությունը, որին ուղղություն տվող և կազմակերպող առաջնային դերը պատկանում է մանկապարտեզին:

Ընտանիքների ներգրավումը և մասնակցությունը ներմանկապարտեզային աշխատանքներին, միասնական աջակցության համակարգի ձևավորումը և ժամանակակից դաստիարակի երեխայակենտրոն մոտեցումը կխթանեն երեխաների ներդաշնակ զարգացումը սկսած վաղ տարիքից:

Վաղ տարիքում երեխաների դաստիարակությունը տարրական կրթության որակի հիմքաքարն է. այն դրական ազդեցություն ունի սահուն անցում կատարելու դպրոց հեշտ հարմարվելու և անցնելու ակտիվ ուսումնառության, նախապատրաստվելու հետագա կյանքին:

Մանկապարտեզում երեխայի դաստիարակության և ուսուցման կազմակերպիչը, ղեկավարն ու պատասխանատուն դաստիարակն է, որի մասնագիտական և անձնային որակներով պայմանավորված են երեխաների զարգացման ընթացքը և արդյունավետությունը:

Նախադպրոցական կրթությունը պետք է դիտարկել որպես ընդհանուր կրթության բաղադրամաս՝ վաղ զարգացմանն ուղղված միջոցառումների համատեքստում:

Ընդգծելով վաղ տարիքի կարևորությունը, շատ մանկավարժների կարծիքով, երեխայի դաստիարակության և կրթության գործընթացը պետք է սկսել հնարավորինս վաղ, այլապես հետո ուշ կլինի:

Այն ամենը ինչ կատարվում է շրջապատում մեծ ազդեցություն է գործում երեխայի իմացական զարգացման վրա, նպաստելով նրա անձի հետագա ձևավորմանը: Ծնողները և մանկավարժները պետք է ծանոթ լինեն երեխայի զարգացման շրջափուլերին և ամիս առ ամիս հետևեն, թե որքանով է երեխաների զարգացումը համապատասխանում չափորոշիչներին:

Մանկապարտեզի և ընտանիքի կապը, որպես ժամանակակից խնդիր

Նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալական զարգացման համար գոյություն ունի երկու կարևոր ինստիտուցիոնալ կառույց՝ նախադպրոցական հաստատություն և ընտանիք: Անհրաժեշտ է և կարևոր մանկապարտեզի ու ընտանիքի արդյունավետ համագործակցությունը: Ընտանիքում են դրվում երեխայի վաղ զարգացման հիմքերը: Ծնողներն են, որ առաջին անգամ երեխային սովորեցնում են կյանքի այբուբենը, ձևավորում նրանց աշխարհընկալումը, բնավորության գծերը:

Հասարակական նախադպրոցական կրթությունն աջակցում է ընտանիքին՝ իրականացնելու համակարգված երեխայակենտրոն կրթություն:

Ընտանեկան միջավայրն առանձնանում է հուզականությամբ և այնպիսի պայմանների առկայությամբ, որոնց շնորհիվ երեխայի մեջ ձևավորում են՝

- Համապատասխան վերաբերմունք սեփական անձի նկատմամբ,
- Ինքնագնահատման կարողություն,
- Աշխարհընկալում,
- Ճիշտ վարվելակերպ

Նախադպրոցական կրթության համակարգի բարելավման ներկա գործընթացի հիմքում ընկած են մանկավարժական աշխատանքի հումանիզացումը և երեխայի անհատական զարգացման համար նպաստավոր մթնոլորտի ստեղծումը:

Մանկապարտեզում և ընտանիքում տարվող մանկավարժական աշխատանքների բովանդակությունը

Մանկապարտեզը և ընտանիքը երկու կառույցներ են, որոնք կանգնած են ապագայի ակունքներում և նրանց փոխադարձ կապի հետևանքներ կրողը երեխան է: Քիչ չեն դեպքերը, երբ ծնողները դաստիարակների կարծիքը չեն կիսում և երբեմն երեխաներին մեղադրում են ծուլության և համառության, չլսելու և չհասկանալու մեջ: Կարևոր է, որ մակապարտեզի և ընտանիքի պահանջները լինեն միասնական:

Մանկապարտեզի և ընտանիքի կապի համակարգված ձևը մանկապարտեզի և ընտանիքի գործընկերությունն է և երեխաների դաստիարակության խնդիրների փուլային համատեղ իրականացումը:

<u>Առաջին փուլ</u>

Այս փուլում նախագծվում են ծնողների հետ աշխատանքի բովանդակությունն ու ձևերը: Հետագա աշխատանքի պլանավորման համար կատարվում է կարիքների գնահատման վերաբերյալ բլից հարցում:

<u>Երկրորդ փուլ</u>

Այս փուլում դաստիարակների և ծնողների միջև հետագա գործնական համագործակցության համար ստեղծվում են բարիացակամ միջանձնային կապեր:

<u>Երրորդ փուլ</u>

Երրորդ փուլը երեխայի ավելի լիարժեք կերպարի և նրան հաղորդած գիտելիքների ճիշտ ընկալման վերաբերյալ ծնողների կարծիքի ձևավորումն է: Գիտելիքներ, որոնք նրանց հասանելի չեն տանը:

<u>Չորրորդ փուլ</u>

Մանկավարժի ծանոթացումն է ընտանիքում երեխաների դաստիարակության խնդիրներին: Այս փուլում դաստիարակները երկխոսության մեջ են մտնում ծնողների հետ ոչ միայն երեխաների վարքագծի դրական կողմերի, այլև դժվարությունների վերաբերյալ:

Հինգերորդ փուլ

Համատեղ հետազոտության և երեխայի անձի ձևավորման այս փուլում պլանավորվում են կոնկրետ բովանդակային աշխատանքներ և ընտրվում համագործակցության ձևեր:

Նշված բոլոր փուլերում շփման մեջ հեղինակություն ձեռք բերելու համար, դաստիարակից պահանջվում է պահպանել հետևյալ կանոնները՝

- ծնողներին դիմել անունով,
- նրանց նկատմամբ դրսևորել անկեղծ հետաքրքրություն,
- ունենալ սլելու ունակություն,
- ծնողների հետ խոսել բարյացակամ, ժպիտով,
- զրուցել այն մասին, թե ինչ է հետաքրքրում ծնողներին և նրանք ինչն են կարևորում ամենից շատ,
- ընդունել ծնողներին որպես ցանկալի հյուրի, սակայն շենք մուտք գործելը սահմանափակել որոշակի կանոններով,
- կարողանալ ծնողներին հնարավորություն տալ զգալու իրենց կարևորությունը և ձևավորել հարգանք նրանց կարծիքի նկատմամբ:

Անհրաժեշտ է հրաժարվել ձևական շփումից, օգտվելով ընդունված ժամանակակից ձևերից, ինչպիսիք են՝ <<կլոր սեղան>> -ները, հարց ու պատասխանների երեկոները համատեղ տոներն ու միջոցառումները, մանկավարժական և ծնողական խորհուրդները, բանավեճերը, երեխաների և ծնողների համատեղ աշխատանքների ցուցահանդեսները, վերապատրաստման պարապունքները, որոնք կօգնեն ծնողներին կողմնորոշվելու տարբեր իրավիճակներում, վերլուծելու, գտնելու արդյունավետ լուծումներ:

Ընտանիքում ստեղծված բարոյահոգեբանական մթնոլորտն իր ուղղակի ազդեցությունն է թողնում երեխաների դաստիարակության վրա: Այս գիտակցմամբ պետք է առաջնորդվի յուրաքանչյուր ծնող և ստեղծի բարենպաստ պայմաններ երեխաների լիարժեք աճի, զարգացման ու դաստիարակության համար:

Այստեղից էլ՝ երեխաների ընտանեկան դաստիարակության ամուր հիմքը ծնողների՝ իրար նկատմամբ ունեցած սերն է: Այն ընտանիքում, ուր չկա հոր և մոր փոխադարձ, ամուր սեր, այնտեղ չկա և չի կարող լինել երեխաների դաստիարակություն:

Ընտանիքը հուզական փոխհարաբերությունների ինստիտուտ է: Ժամանակակից երեխան արդեն սովորել է հարմարվել մանկավարժի արժեքային մոտեցմանը, սակայն, ինչպես միշտ, յուրաքանչյուր երեխա իր ընտանիքի անդամներից անպայման ակնկնալում է սեր: Նրան սիրում են ոչ թե լավ արարքի համար, այլև ուղղակի որպես այնպիսին ինչպիսին որ ինքը կա:

Երեխայի դաստիարակությամբ պետք է զբաղվել հնարավորինս ավելի վաղ: Մանկական երևակայությունը, որ կարող է մեծերի համար զավեշտալի թվալ, իրականում ստեղծագործություն է: Երբեմն դաստիարակներն արժանանում են ծնողների թերահավատությանը՝ օգտագործելով <<Հիմարություն է>>, <<Չես կարող>> և այլ արտահայտություններ: Երեխան, որպես օրենք, անում է այն, ինչ հանձնարարում կամ ցանկանում են մեծերը: Իսկ դա խանգարում է երեխայի նախաձեռնողականությանը: Պետք է ընդառաջ գնալ երեխային, թափանցել նրա ներաշխարհը, ընդունել որպես ընկեր: Շատ ծնողներ աշխատում են որքան հնարավոր է շատ խաղալիքներ գնեն երեխայի համար: Ուշադիր դիտեք, խանութներում լցված են դրանք և զվարճալի են միայն առաջին հայացքից: Հիմնականում պատրաստված են կոմերցիոն նպատակներով: Խաղալիքի արժեքը գնի մեջ չէ: Երեխան սիրով խաղում է փայտիկով, ճյուղով, տերևով, ամենատարբեր թափոններով: Ամենահետաքրքիր խաղալիքը կափ է, ծեփամածուկը, թուղթն ու մատիտը (հատկապես վառ գույնի), որոնց նա կարող է իր ցանկացած ձևը տալ: Երեխաները խաղալիքը կարող են ջարդել: Թանկ ու հետաքրքիր խաղալիքի ջարդելը մեծերին վրդովմունք է պատճառում: Բայց երեխան ունի իր տրամաբանությունը՝ դա կարող է անել հետաքրքրությունից դրդված: Աշխարհը ճանաչելու, հետազոտելու բնազդը նրան մղում է տեսնելու, թե ինչ կա խաղալիքի ներսում: Դրա համար երեխային պատժելը անիմաստ է: Լավ կլինի ազդել նրա զգացմունքների վրա խաղալիքը ներկայացնել որպես կենդանի օրգանիզմ, որին պետք է կարեկցել, հոգ տանել նրա մասին: Նման մշակված վերաբերմունքի դեպքում երեխան ուշադիր կլինի:

Չպետք է կարծել, որ համբերատարությունը և զսպվածությունը հատուկ են միայն մեծահասակին: Երեխան վաղ տարիքից պետք է սովորի անհարմարության (ավտոբուսում՝ մարդկանց խտությունը, խանութում՝ հերթը...): Շատ կարևոր է, որ նա սովորի կարողանալ դիմանալ հոգնածությանը, չընդհատի մեծերի խոսակցությունը, հանգիստ սպասի իր հերթին, առանց դժգոհելու հրաժարվի ինչ-որ բանից: Նման հարցերում ծնողները պետք է զգույշ լինել, չմոռանալով նրանց տարիքային և անհատական առանձնահատկությունները, աստիճանաբար, քայլ առ քայլ գնան համբերատարության մշակման, որպեսզի երեխայի մեջ չառաջանա հակառակվելու ձգտում:

Երեխայի առաջ որոշակի խնդիր դնելով՝ <<սպասի'ր>>, <<համբերի'ր>>, <<քի'չ հետո>> և այլն, պետք է բացատրել, թե ինչու հենց այդպես պետք է վարվել: Օրինակ՝ <<մի քիչ էլ քայլենք, կհասնենք զբոսայգի, այնտեղ ջուր կխմես կամ կհանգստանաս, հասնենք ծառին, արևից խուսափելու համար կկանգնենք ստվերում>>: Կազմակերպված և համբերատար երեխան շրջապատում ընդունվում է, դպրոցում լավ կզգա և հեշտ կսովորի:

Դեռևս նախադպրոցական տարիքում երեխաները լսում և իրենց խոսքում օգտագործում են <<Շնորհալակություն>>, <<Խնդրեմ>> և այլ արտահայտություններ: Խնդիրը ոչ այնքան և ոչ միայն բառերի օգտագործման մեջ է: Բոլոր դեպքերում ծնողները պետք է սկսեն իրենցից և պահպանեն ընտանեկան անդորրը: Անգամ նորածինն է զգում մեծերի վեճը: Ընտանիքում մեծերի վայելուչ, բարյացակամ փոխհարաբերությունները երեխայի կողմից ընդունվում է որպես վարվեցողության չափանիշ:

Արդեն երեք տարեկանում, երեխան տեսնելով ծնողների հարգալից վերաբերմունքը տատիկի և պապիկի տկատմամբ, ընդօրինակում է. Իր մեջ առաջանում է նման վերաբերմունք ծնողների տկատմամբ:

Բարեկիրթ ընտանիքում կյանքը լցված պետք է լինի բազում հաճելի մանր ու մեծ ծեսերով և ավանդույթներով: Կարևոր է միասին սեղան նստելը, առավոտյան ուրախ ողջունելը, գիշերը քնելուց առաջ հրաժեշտ տալը, առավոտյան բարևելը և այլն:

Նման դրական սովորույթների կողքին կարող են ի հայտ գալ տարածված բացասական սովորույթները, ինչպիսիք են՝ եղունգների կրծելը, քիթը փորելը: Նման երևույթներ առաջանում են, երբ երեխան գտնվում է ոչ հարմարավետ պայմաններում. Երբ ինչ-որ բանից վախենում է, չի կարողանում կատարել մեծերի պահանջները: Զայրույթը, կոշտ դիտողությունը կբարդացնեն իրավիճակը և ավելի կարմատավորեն այդ սովորույթը: Հատկապես ուրիշների ներկայությամբ պետք չէ կշտամբել, ծաղրել երեխային:

Ծնողների հետ համագործակցելիս պետք է նկատի ունենալ, որ այսօր երեխան այլ է, քան երեկ: Երեխան ֆիզիկապես և մտավոր շատ արագ է զարգանում յուրաքանչյուր փուլում: Այդ պատճառով կարևոր է, որ ծնողները շատ ուշադիր հետևեն, թե ի՞նչ և ե՞րբ է հարմար երեխային, ի՞նչն է հետաքրքիր՝ առանց կորցնելու զարգացման բարենպաստ ազդեցության ճիշտ ժամանակը:

Վարքագծի կանոնների դաստիարակման ընթացքում պետք է աջակցել կիրառելու՝ կարողանալ սպասել, չխանգարել ուրիշին, հանգիստ կատարել մեծերի կողմից տրվող հանձնարարությունը, հավաքել, տեղը դնել խաղալիքը, պահպանել մաքրություն և այլն:

Պետք է երեխաներին մասնակից դարձնել զվարճություններին, տոնական ցերեկույթներին, որպեսզի նրանք զգան այդ օրերի հանդիսավորությունը. տանը՝ սենյակիի, մանկապարտեզում՝ խմբասենյակի զարդարմամբ, ուրախ երաժշտությամբ, բարձր տրամադրությամբ, գեղեցիկ հագուստով, հյուրերի այցելությամբ և այլն:

Դաստիարակի և ծնողի համատեղ դիտումների, զրույցների, նպատակային էքսկուրսիաների, գրքերի նորոգման աշխատանքներին մասնակցության միջոցով, դեռևս վաղ տարիքից, սկսվում է երեխաների առաջին ծանոթությունը գրքերի աշխարհին:

Ծնողները և ընտանիքի բոլոր անդամները պետք է գիտակցեն, որ ամենևին կարևոր չէ ինչ-որ արտակարգ բան անել երեխայի վաղ զարգացմանը նպաստելու համար, որ կարևորը ընտանեկան համերաշխ, հաճելի մթնոլորտն է, ընտանիքում ստեղծված տաք, բնականոն հարաբերությունները:

Պետք չէ երեխաների, ինչպես նաև ծնողների հետ հաղորդակցվելիս դառնալ ձանձրալի խրատախոսներ:

Վերը նշված մոտեցումները իրականացնելու համար անհրաժեշտ է՝

- երեխայի հետ կազմակերպել խոսակցական թենիս՝ ասելիքը կազմված 6 բառից ոչ ավելին,
- նկատողություն անել նույն պահին,
- երեխային ասել, որ այդ պահվածքից կամ բառերից հետո չէք ուզում խոսել նրա հետ: Այսինքն՝ լու՛ռ մնացեք մի քանի րոպե, 3 տարեկանի հետ՝ լռե՛ք մինչև 15 ր, մեծերի հետ՝ ավելի շատ,
- կարելի է երեխայի հարցին հարցով պատասխանել. <<Իսկ դու ի՞նչ ես մտածում այդ մասին>>,
- զրույցի ժամանակ պետք է ունենալ դադարներ,
- <<սառը>> վերաբերմունք՝ երեխային զրկելով որոշ արտոնություններից:

Քանի որ խոսքը զարգանում է մեծերի հետ հաղորդակցման ընթացքում, ապա անհրաժեշտ է՝

- ապահովել դաստիարակի հաճախակի շփումը երեխայի հետ,
- երեխայի մեջ դաստիարակել մեծերի և փոքրերի հետ շփման պահանջ,
- արձագանքել՝ խրախուսելով երեխայի կողմից մեծերին դիմելու յուրաքանչյուր նախաձեռնություն:

Երկխոսություն

Երկխոսությունը համարվում է միջանձնային ներդաշնակ հարաբերությունների հաստատման հիմք:

Երկխոսությանը չեն նախորդում ինչ-որ այսպես թե այնպես ուրիշի կյանքը սահմանափակող, ստուգող և ուղղորդող նախնական հստակ պայմաններ, սպասումներ և գնահատական (<<Եթե դու այդպես ես որոշել, ուրեմն ես …>>), (<<Ես գիտեմ, թե ինչպես է պետք...>>), (<<Դուք պարտավոր եք...>>): Առավել նախընտրելի են՝ <<Հավանաբար դուք գիտեք, թե հատկապես ինչ է Ձեզ պետք, որն է լավ Ձեզ համար>>: Սա է խոսակցի համար ընդունելի դրական, առանց պայմանի սկզբունքը: Միջանձնային հարաբերությունների հումանացումն ավանդաբար կապվում է իրար հասկանալու, կարեկցելու, ուրախությունը և տխրությունը կիսելու կարողությունների հետ:

Խոսակիցը պետք է զգա, որ իրեն հասկանում են, տեսնում, լսում: Իրար լսելու կարողությունը դառնում է երկխոսության անկյունաքարը:

Երբեմն ծնողի վատ արարքը կամ խոսքը կարող են այնքան վիրավորական լինել, որ դաստիարակը բացարձակ ցանկություն չունենա դիմացինին խորությամբ հասկանալ և հասկացածը տվյալ իրադրության մեջ կիրառել: Այդուհանդերձ, դաստիարակը պետք է կարողանա իր զգացմունքներն արտահայտել, խոսել առանց դիմացինին նվաստացնելու և վիրավորանք պատճառելու: Ծնող-մանկավարժ երկխոսությունը անձնական հավասար շփում է, փորձի համատեղ ձեռքբերում:

Եթե դաստիարակը զգում է, որ ծնողն իրեն <<ներքաշում է>> ինչ-որ դերի մեջ, հասկանալով ծնողի մտադրությունը, նա կարող է զգուշորեն խոսել դրա մասին և շրջանցել այն: Օրինակ՝ տարբեր կլինի ընկալումը, եթե դաստիարակը <<Դուք ինձ խաբում եք>> արտահայտության փոխարեն ասի. <<Չեմ կարծում, որ դուք լիովին արդարացի եք>>:

Ավելի արդյունավետ է, որ դաստիարակը ծնողին, հատկապես խնդրահարույց, բարդ բնույթի հարցերի շուրջ, անկեղծ ասի. <<Ինձ անհանգստացնում է մեր խոսակցության ընթացքը>>, <<Ես չեմ զգում, որ կարող եմ ձեզ հետ համաձայնության եզրեր գտնել: Սակայն հավատում եմ, որ ելք կգտնենք, այլապես իրար օգտակար չենք կարող լինել…>>: Այսպես՝ համագործակցությունը, ինչպես երկխոսությունը, ընդարձակում է դաստիարակ-ընտանիք միջանձնային փոխհարաբերությունները, որտեղ յուրաքանչյուր կողմ պատասխանատու է իր արարքների, վարվելակերպի, ինքնաարտահայտման, հույզերի, դիմացինից սպասելիքների համար:

Փաստ է, որ երեխան վաղ մանկության ճանապարհն անցնում է ծնողների և դաստիարակների ուղեկցությամբ: Այդ ճանապարհի մի հատվածը երեխային տանում է մանկապարտեզ, որը լուրջ փոփոխություն է երեխայի կյանքում: Դաստիարակը պարտավոր է տարբեր, հատկապես խնդրահարույց իրավիճակներում ամուր բռնել երեխայի՝ իրեն մեկնած ձեռքը, որ նրան վստահություն ներշնչի և երեխան իրեն ապահով զգա:

Մանկավարժ և ծնող երկխոսության մի քանի դժվարություններ

Մանկապարտեզ-ընտանիք փոխհարաբերության վերլուծությունները ցույց են տալիս, որ հատկապես վերջին տարիներին նկատելի են մանկավարժական գիտելիքների իրազեկման և տարածման ձևերի ձնտրտուքը՝ ծնողների կրթության իրականացման փորձերը:

Համագործակցությունը բացառում է ճնշումը միմյանց նկատմամբ, օտարացումն իրարից, մանկավարժի կողմից մասնագիտական գիտելիքների վերամբարձ ցուցադրումը, անհասկանալի եզրույթների օգտագործումը և այն:

Նախադպրոցական կրթության օրենսդրական դաշտը որոշարկում է մանկապարտեզի և ընտանիքի փոխհարաբերությունները, ըդգծում ընտանիքի գլխավոր դերը: Մանկապարտեզը ոչ պարտադիր սոցիալական ծառայություն է: Երեխան կարող է գնալ կամ չգնալ մանկապարտեզ:

Մանկապարտեզի առաջնային խնդիրն է՝ որքան հնարավոր է շատ ծնողներ ցանկանան օգտվել այդ ծառայությունից, քանի որ այդ կառույցը հիմնվել է բավարարելու ծնողների սոցիալական պահանջարկը:

Մանկապարտեզը և ընտանիքը նույն գետի երկու ափերն են: Համագործակցելու համար պետք է կրճատել և միասին հարթեցնել երկուսի միջև ընկած տարածությունը:

Ակնհայտ է, որ ընտանիքում լայն հնարավորություններ են բացվում հաղորդակցվելու վարքագծի աշխատանքի կանոններին, ձևավորվում բնավորության հիմքերը, երեխայի համոզմունքները, սովորույթները: Ընտանեկան կանոնները պետք է լինեն բաց, մարդասիրական, ժամանակակից:

<u>Կիրթ ու կրթված սերունդ ունենալու համար պետք է ունենալ կիրթ ու կրթված մայրեր:</u>

Ծնողը տեսնում է, թե ինչպես է դաստիարակը ընդունում երեխային, ի՞նչ աշխատանք է տանում մյուս երեխաների հետ: Սա միաժամանակ և՛ ուսուցում:

Երեխայի զգայական և մտավոր զարգացման առարկայական-պատկերավոր հզոր միջոց է պարբերաբար փոփոխվող, զարգացնող առարկայական միջավայրը: Մանկապարտեզում և տանը այն պետք է համապատասխանի սանիտարահիգիենիկ պահանջներին և չափանիշներին: Խմբի ձևավորումը կարող է լինել (ցանկալի է տան նման) տարատեսակ՝ կախված հաստատության հնարավորություններից և պայմաններից: Խաղային ռտարածքը պետք է համապատասխանի երեխաների սոցիալական զարգացման կարիքներին, ապահովի ամենօրյա շարժողական ռեժիմը: Տանը երեխային պետք է տրամադրել առանձին սենյակ կամ հատուկ անկյուն: Եվ տանը՝ սենյակի, և մանկապարտեզում՝ խմբասենյակի ձևավորմանը պետք է մասնակցի նաև ինքը՝ երեխան:

Երեխաների գեղագիտական զարգացման վրա վաղ է սկսում ազդել շրջապատը:

Եթե երեխան կարողանում է հիանալ շրջապատում եղած խոտով ու ծաղիկով, թիթեռով, ապա չի տրորի, չի ոչնչացնի դրանք և անպայման կկանխի այլոց վատ արարքները:

Պետք է լուրջ վերաբերել երեխայի շրջակա միջավայրի արտաքին ձևավորմանը՝ բազմազան վառ տպավորություններ հաղորդելու նպատակով:

Անհրաժեշտ է մանկապարտեզում միջավայր նախատեսել նաև ծնողների համար՝ հատուկ բովանդակությամբ վահանակներ, գրքույկներ, շրջիկ թղթապանակ, մեթոդական գրականության համառոտ ծանոթագրություններ և հանգստի անկյուն:

Ակնհայտ է, որ ազատ, հարմարավետ և գեղեցիկ միջավայրը օգնում է իրականացնելու որակյալ և արդյունավետ երեխայակենտրոն դաստիարակություն:

Տանը երեխան պետք է ունենա սենյակ, հատուկ <<Անկյուն>>, անհրաժեշտ է կահավորանքով, խաղալիքներով, գրքերով և գրենական պիտույքներով, որտեղ ոչ միայն իրականանում է անմիջական շփումը ընտանիքի անդամների հետ, այլև հնարավորություն՝ մենակ մնալ ինքն իր և իր սեփական իրերի հետ:

Ծնողների հետ հաղորդակցման փորձի ինքնավերլուծում

Երեխայի միջև համատեղ գործունեության և տեղեկատվության փոխանակման շնորհիվ ստեղծվում և զարգանում են հիմնավորված կապեր՝ շփում:

Շփումը՝ իրար հասկանալու բարդ գործընթաց է, որը ընդհանուր առմամբ, ենթադրում է հաղորդակցություն, համագործակցություն և ընկալում:

Մանկապարտեզ-ընտանիք համագործակցության մեջ կարևորվում են նաև մեծահասակ-մեծահասակ, մեծահասակ-երեխա և հակադարձ շփումները:

Շատ կարևոր է, որ մանկավարժները կարողանան մեթոդապես ճիշտ կատարել երեխայի տնից մանկապարտեզ, խմբից խումբ տեղափոխությունները և այդ ուղղությամբ հատուկ աշխատանք տանեն ծնողների և երեխաների հետ:

Մանկապարտեզը ընտանիքի հետ համագործակցություն, հարմարեցված գործելակերպ ապահովելու նպատակով պետք է լավ իմանա երեխայի տարիքային և անհատական առանձնահատկությունները, հարգի երեխային և ընդունի այնպիսին, ինչպիսին կա՝ հոգ տանելով նրա զարգացման ու առաջընթացի մասին:

Ծնողների հետ համագործակցությանը ներկայացվող պահանջները

Ծնողների հետ համագործակցության ժամանակ պետք է նկատի ունենալ հետևյալը՝

- տարբեր առիթներ օգտագործելով՝ հնարավորինս շատ շփվել, շատ խոսել երեխայի հետ,
- կատարել ֆիզվարժություններ,
- օդափոխել երեխայի սենյակը,
- ավելացնել զբոսանքների և մաքուր օդում գտնվելու ժամանակահատվածը
- Խոսել երեխայի հետ՝ անվանելով շրջապատռում գտնվող առարկաները, իր մարմնի մասերը և ալն,
- Խթանել և աշխուժացնել երեխայի արթունությանը, առավոտյան և ցերեկը կատարել ֆիզիկական վարժանքներ,

Ծնողների խնդիրն է՝

- Երեխաներին ծանոթացնել առաջին գրքերին,
- Հաճախակի կազմակերպել համատեղ խաղեր՝ երեխայի կամ մեծահասակի դեմքը ծածկելով թաշկինակով, անձեռոցիկով, գլխաշորով,
- Հնարավորինս շատ խոսել երեխայի հետ,
- Ազատ խաղալու հնարավորություն տալ,
- Հետևել, որպեսզի ստանա իր տարիքին համապատասխան բավարար տեղեկատվություն:

Ծնողների համար ստեղծված մանկավարժական վահանակը պետք է ապահովի տեղեկատվություն երեխաների զարգացման ընթացքի, ծրագրային խնդիրների, ծնողների իրավունքների, պարտականությունների և այլնի մասին:

Խորհուրդներ ծնողներին

- Երեխաների դաստիարակության խնդիրների հետևողական իրականացումը դարձրեք սովորույթ, բնավորության գիծ, ամենօրյա կանոն ու վարքագիծ,
- Հետևեք երեխայի յուրաքանչյուր քայլին, անհաջողության դեպքում խուճապի մի մատնվեք, որպեսզի նրանք լինեն համբերատար և ունենան արդյունավետ գործելու կարողություն,
- Անընդհատ մի կատարեք երեխայի ցանկությունը, մի ընտելացրեք դրան, երբեմն մերժեք նրան. դա կամք և ինքնուրույնություն կդաստիարակի,
- Երեխայի հետ խաղալիս, անգամ, եթե հարմար չէ, ցուցադրեք, որ շատ հաճույքով եք ուզում խաղալ,
- Երեխայի համար գնեք խաղալիքներ,
- Հաճախակի վերցրեք երեխային ձեռքի վրա,
- Երբեք մի խոսեք երեխայի հետ նրա լեզվով,
- Տանը ստեղծեք հաճելի մթնոլորտ,
- Երեխայի ներկայությամբ լուրջ վեճեր մի ծավալեք,
- Նյարդայնությամբ մի վարակեք երեխաներին,
- Ընտանիքում տատիկի և պապիկի ներկայությունը բարենպաստ է երեխաների զարգացման և դաստիարակության համար,
- Երբեք մի ծաղրեք երեխային,
- Ոչինչ մի արեք երեխայի փոխարեն, եթե նա կարող է դա անել,
- Նկատեք և խրախուսեք երեխայի նույնիսկ ամենափոքր հաջոխությունը, երբեք երեխային մի համեմատեք ուրիշների հետ,
- Պարզեք երեխայի հետաքրքրությունների շրջանակը,
- Լավ է եռրեխային գովել, քան նախատել,
- Սովորեցրեք դիտել գրքի նկարազարդումները:

Եզրակացություն

Երեխայի լիարժեք զարգացումը դժվար է պատկերացնել առանց ծնողների մասնակցության: Դա ամենօրյա ջանք պահանջող աշխատանք է, որը պետք է կատարվի սիրով և հաճույքով, քանզի այն արվում է երեխայի համար, նրա առողջությանը և համակողմանի զարգացմանը նպաստելու համար:

Դաստիարակը պարտավոր է ոչ միայն ծնողների ուշադրությունը հրավիրել երեխաների ինքնուրույն խաղերի զարգացման համար ստեղծված պայմանների վրա, այլև աջակցել՝ ելնելով երեխայի զարգացման աստիճանից. նա պետք է որոշի, թե ի՞նչ և ինչպե՞ս սովորեցնել երեխային, ի՞նչ խաղալիքներ տրամադրել և ինչու՞, ու՞ր գնալ երեխայի հետ, և ի՞նչ դիտել, ի՞նչ ցուցադրել, ինչպե՞ս խաղալ նրա հետ և այլն: Առանց մեծերի ուսուցողական ներգործության ոչ մանկապարտեզում, ոչ ընտանիքում հնարավոր չէ ապահովել երեխաների մտավոր լիարժեք զարգացումը:

Ծնողները և ընտանիքի բոլոր անդամները պետք է գիտակցեն, որ ամենևին կարևոր չէ ինչ-որ արտակարգ բան անել երեխայի վաղ զարգացմանը նպաստելու համար: Այդ հարցում առավել էական են ընտանեկան համերաշխ, հաճելի մթնոլորտը և ընտանքում ստեղծված ջերմ ու ներդաշնակ հարաբերությունները: Ընտանեկան միջավայրով, երեխաների նկատմամբ դրսևորած վերաբերմունքով պայմանավորվում է նաև այն հանգամանքը, թե ինչպիսին կմեծանա ընտանիքի ավագ, միջնեկ, կրտսեր կամ՝ միակ երեխան:

Ընտանիքն ու մանկապարտեզն ունեն իրենց առանձնահատուկ դերը, չեն կարող փոխարինել միմյանց:

Ծնողները պետք է ակտիվորեն մասնակցեն մանկապարտեզի կյանքին, ընդգրկվեն օգտագործվող ավանդութային և ոչ ավանդութային աշխատանքի ձևերում ու միջոցառումներում:

Ծնողների հետ կազմակերպվող անհատական զրույցները գնահատելի են նրանով, որ դաստիարակին հնարավորություն են տալիս միշտ շփման մեջ լինել ընտանիքի հետ և ավելի ազատ, բաց խոսել երեխայի մասին: Այդ զրույցները լինում են կարճատև, բայց կարող են ձեռք բերել շատ մեծ նշանակություն, քանի որ դաստիարակին և ընտանիքին իրազեկ են դարձնում երեխայի կյանքի բոլոր իրադարձություններին և հնարավորություն են տալիս անմիջապես ազդել երեխայի վարքի վրա:

Մանկապարտեզ- ընտանիք կապը հիմնվում է փոխադարձ վստահության վրա: Արդյունավետ հաղորդակցությունը բազմապատկում է այն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մանուկյան Լ. և ուրիշներ, Նախադպրոցական կրթական համալիր ծրագիր, - Երևան, Զանգակ- 99, 1999
2. Հովհաննիսյան Ա. և ուրիշներ, <<Պարտեզ>> կրթական ծրագիր, - Երևան, Զանգակ – 99, 2008
3. Միտոյան Հ. և ուրիշներ, Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր, - Երևան, ԿԱԻ, 2011
4. Հովհաննիսյան Ա. և ուրիշներ, Մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբի կրթական համալիր ծրագիր, - Երևան, ԿԱԻ, 2011
5. Միտոյան Հ. և ուրիշներ, Մանկապարտեզի կրտսեր առաջին խմբի կրթական համալիր ծրագիր, - Երևան, ԿԱԻ, 2012
6. Հովհաննիսյան Ա. և ուրիժներ, Մանկապարտեզի վաղ տարիքի 1-ին, 2-րդ խմբերի կրթական համալիր ծրագիր, - Երևան, ԿԱԻ, 2012
7. Հովհաննիսյան Ա. - Դաստիարակենք միասին (մանկապարտեզի և ընտանիքի համագործակցություն), - Երևան Աստղիկ Գրատուն, 2014
8. Գիտամեթոդական պարբերական <<Նախադպրոցական կրթություն>>, - Երևան, <<Զանգակ-99>>, 2008
9. <<Քայլ առ քայլ>> հիմնադրամ – Ծնողական կրթություն (վերապատրաստման ուղեցույց), - 2005թ.